

ԹԵՈՂԻԿԻ «ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑ» ԻՐԵՒ
ՆԱՄԱԿԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՆԱՂԲԻՐ

Բանալի քառեր՝ Թեոդիկ, «Ամենուն տարեցոյցը», նամակ, Եղիա Տեմիրճիպաշեան, գրապատմական երկխօսութիւն, բանասիրական ճշգրտումներ:

Keywords: “Amenun Taretsuytsy,” Theodik, letter, Eghia Temirchipashyan, literary-historical dialogue, philological adjustments.

Գաղտնիք չէ, որ հայ մամուլի շատ ու շատ անուններ եղել եւ մնում են գրապատմական երեւոյթների ու իրադարձութիւնների անգնահատելի պահոց: Այդ պահոցներից մէկը վստահաբար հայ մշակոյթի երախտաւորներից Թեոդիկի (Թեոդորոս Լապճինճեան) «Ամենուն տարեցոյցը» հատորներն են՝ լոյս տեսած 1907-1929 թթ., որոնց հրատարակութիւնը համընկաւ իր բնութագրած եւ իր կրած «հայ Գողգոթային» ճամբորդելով հեղինակի հետ Պոլսից մինչեւ Փարիզ, Վենետիկ ու Վիեննա, դառնալով հայութեան կեանքի իւրատեսակ վկայարանը: Այս առումով բնութագրական է հայ մամուլի մէկ այլ երախտաւորի՝ Հայր Մկրտիչ Պոտուրեանի գնահատութիւնը, թէ «Այս գիրքը երբեք «րեքլամ»ի պէտք չունի: Ո՛չ թէ միայն «Ամենուն», այլ «ամէն ժամանակի Տարեցոյց» է, ո՛չ երբեք հիննալու դատապարտուած» [Թեոդիկ, 1909, 8]:

Պարբերականի՝ «ամենուն» պատկանող էջերում շատ հրաշալի նիւթեր կարելի է մատնանշել՝ գրական բազմաթիւ ու բազմապիսի անտիպ էջերից մինչեւ թարգմանութիւններ, պատմագիտական ակնարկներ, բժշկագիտական տեղեկութիւններ ու ծիծաղաշարժ ու զուարճալի պատմութիւններ, որոնք, ինչպէս բնութագրում է պոլսահայ գրող, «Մարմարա» օրաթերթի խմբագիր Ռ. Հատտէճեանը, այսօր էլ «կը փնտռուին, ուսումնասիրութիւններու ատաղձ կը հայթայթեն» [Հատտէճեան, 2008, 58]: Սակայն մեր ուշադրութեան կենտրոնում նամակներն են, որոնք շատ յաճախ շարունակում են պահուած մնալ միայն տարեցոյցի էջերում եւ կամ սկզբնադրիւրի դեր են խաղացել առանձին հեղինակների ժողովածուների հրատարակութեան համար: Ինքը Թեոդիկն էլ նամակները դիտարկել է իր պարբերականի կարելոր ենթաբաժանումներից մէկը:

Բնականաբար, այստեղ տեղ գտած հարիւրաւոր նամակներին անդրադարձը հնարաւոր չէ: Արձանագրենք միայն, որ գրեթէ բոլոր համարները բացում են խմբագրին ու նրա գործին նուիրւած գնահատական-նամակներով ու մամուլի էջերի գրախօսականներից քաղուածքներով, որոնք, սակայն, նկատի առնելով իբրեւ մէկ թեմատիկ ընդհանրութիւն, զանց են առել: Զանց են առնուած նաեւ համապատասխան ծանօթագրութիւններով եւ բանասիրական աղբիւրային յղումներով յետագայում հրատարակուած նամականիւնները:

Սրա կողքին կայ նաեւ Թեոդիկի՝ տարեցոյցից դուրս մնացած նամակագրութիւնը՝ թէ՛ իր գրած (ասենք՝ Արշակ Ալպոյաճեանին ուղղուած տասնեակ նամակները, որոնք պահուում են Եղիշէ Զարենցի անուան ԳԱԹ-ում), թէ՛ իրեն ուղղուած նամակները (եթէ վերցնելու լինենք միայն Դանիէլ Վարուժանի օրինակը), որոնք յաճախ վերաբերում են նաեւ պարբերականի հրատարակութեան, աշխատակիցների կամ նիւթերի ընտրութեան հարցերին: Պէյրութի «Հայկազեան Հայագիտական Հանդէս»ի էջերում Վաչէ Ղազարեանը «Թղթեայ զաւակներու «հայր»ը՝ Թեոդիկ» վերտառութեամբ լոյս է ընծայել Թեոդիկի նամակները՝ ուղղուած Մեսրոպ Նշանեանին (2006, էջ 261-296), իսկ Վարդան Մատթէոսեանը տպագրել է «Թեոդիկին ուղղուած նորայայտ նամակներ» (2014, էջ 339-376): Սակայն այս բոլորին անդրադարձը կարող է մէկ այլ քննութեան նիւթ լինել:

Ինչ մնում է «Ամենուն տարեցոյց»ին, նրա էջերում հիւրընկալուել են բազմաթիւ գրամշակութային գործիչներ, նուիրական անուններ՝ Մատթէոս Մամուրեան, Հայր Ղեւոնդ Ալիշան, Դանիէլ Վարուժան, Ռուբէն Սեւակ, Տիգրան Զեօկիւրեան, նրանց կողքին եւ՝ արեւելահայ դէմքեր, թէպէտ

ոչ նոյն ընդգրկումով: Կարելի է ընդգծել, որ որոշակի նախապատուութիւններ, այնուամենայնիւ, նկատուում են: Դա առաջին հերթին վերաբերում է դասընկերներ Ռեթէոս Պերպերեանին, Եղիա Տէմիրճիպաշեանին, Մինաս Չերազին, ինչպէս նաեւ Գրիգոր Օտեանին: Անկարելոր չէ, որ ինքն էլ Պերպերեան վարժարանի շրջանաւարտ էր:

Շարադրանքում տրուում են ոչ միայն նամակագրական էջերը, այլեւ դրանց մատենագիտական յետագայ ճակատագիրը:

Այսպէս, Թէոդիկի տարեցոյցի տարբեր համարներում լոյս տեսած Եղիա Տէմիրճիպաշեանի նամակներից յիշենք հետեւեալները՝ ուղղուած Մինաս Չերազին (1869, Մարտ 10(22), Օգոստոս 25, 1874, Մայիս 14, 1898, 13 Ապրիլ), Հրանդ Ասատուրին (1881, Սեպտեմբեր 19, 1883, Ապրիլ 9, նոյն թուականի Դեկտեմբեր 30, 1884, Մայիս 22, 1897, Սեպտեմբեր 3 եւ եւս մէկ անթուակիր), Զապէլ Ասատուրին (1890, Սեպտեմբեր 4 եւ 1898, 25 Օգոստոս), որոնց մի մասը պահուում է Եղիշէ Չարենցի անուան ԳԱԹ տարբեր ֆոնդերում կամ մտել է 1955-ի փարիզեան «Արձակ էջեր, նամակներ, քերթուածներ» եւ 1986-ի երեւանեան «Երկեր» ժողովածուների մէջ: Ի տարբերութիւն առաջինի, սակայն, «Երկեր»ում Թէոդիկի աղբիւրները չեն վկայակոչուում: Իսկ Չերազին ուղղուած վերոնշեալ Օգոստոս 25, 1869 թուակիր նամակը, ճիշդ է, առաջինում տեղ է գտել աղբիւրի վկայակոչումով, սակայն՝ առանց ժամանակային նշումի, նամակում տեղ գտած հեղինակային գծագրութեան ու ուղեկցող հետեւեալ տողերի. «Ա՛լ չպիտի գծեմ, Մինաս: Ա՛հ, իրաւամբ գրիչը ձեռքէս ինկած է: Ես որ գրչիս ծայրովը կենդանի ձեռներ դնել կարող էի երէկ՝ անկենդան թղթերու վրայ, այսօր չեմ կարող ինձ պաշտելի ձեռք մը գծել, ձեռք մը որուն վրայ մի՛միայն հոգւոյս հուրովը տաքցած շուրթերով համբոյրներ դրոշմած եմ...» [Թէոդիկ, 1914, 35], ինչն էլ թերեւս անցել է երեւանեան հրատարակութեան մէջ:

Ուշադրութիւն է գրաւում 1911-ի համարում փոքրիկ, առաջին հայեացքից աննշան թուացող, սակայն քնարաշունչ մի նամակ՝ «Առ Ասքանազ Պետո ի Սօտա» յղումով, թուականը՝ 1890: Բանն այն է, որ Պետոն այն նաւագն է, որ Տէմիրճիպաշեանին փրկել է ինքնասպանութիւնից եւ ըստ էութեան նրա գրական մնայուն հերոսն է: «Ամէնուն տարեցոյց»ի համապատասխան համարից արդէն մէկ տարի անց, Զմիւռնիայի «Հայ գրականութիւն» հանդէսի 1912 թուականի 12-րդ համարում ձեռագրից անհրաժեշտ մեկնութիւն-բացատրականով Միքայէլ Կիւրճեանը լոյս է ընծայել «Յիմար արշաւն (յիմար տաղ)» առ Ասքանազ Պետո յղումով 1893, Ապրիլ 27 թուակիր քերթուածը: Բացի այդ՝ Տէմիրճիպաշեանն «իր ազատարարին» է ձօնել նաեւ «Աշխատութեան երգն» արձակ կտորը՝ «Տաղիկ»ի խմբագիր Ա. Սուրենեանին ուղեկցող նամակով:

Եղիայի նամակներից մի ուշագրաւ կտոր է պահուած տարեցոյցի 1908-ի թուի մէջ՝ խորագրուած «Նորայր ու Նուպար», ուղղուած Մեսրոպ Նուպարեանին, եւ գնահատական խօսք է Նորայր Բիւզանդացու «Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն: Հետեւողութեամբ բառարանացն Եմիլ Լիդրէի եւ գաղղիական ակադիմիայ» (1884) եւ Մեսրոպ Նուպարեանի՝ «Բառարան ֆրանսերէնէ հայ-աշխարհիկ» (1892) գործերի մասին: Սա թոյլ է տալիս ենթադրելու, որ նամակը գրուած պիտի լինի 1892-ին կամ դրանից յետոյ:

Բնականաբար, բոլոր նամակներին անդրադարձն անհնար է. եթէ վիճակագրօրէն նայելու լինենք, չկան համարներ, որոնցում ներկայութիւն չունենայ Եղիա Տէմիրճիպաշեան գրողն ու նրա նամականին: Ստացում է, որ այս հեղինակի ստեղծագործական կենսապատումը ամբողջացնելու ճանապարհին «Ամէնուն տարեցոյցը» անգնահատելի դեր ունի:

Յաջորդը Գրիգոր Օտեանի տասնեակ նամակներն են, որոնցից առանձնացրել ենք մի քանիսը: Այսպէս, 1911-ի համարի էջերում «Պոլիս՝ բարեկամի մը» ուղղուած 1884, Ապրիլ 12 եւ 1885, Փետրուար 1 թուակիր երկու նամակներից առաջինը ծանրանում է Սառա Բէռնարի եւ թատրոնի շուրջ, երկրորդը վերաբերում է Եղիա Տէմիրճիպաշեանին: Նամակները տեղ են գտել «Գրիգոր Օտեանի գոհարները» հաւաքածուի Բ. Հատորում (Կ. Պոլիս, 1931)՝ նորից առանց հասցեատիրոջ ճշգրտման: Այդ հասցեատէրը, պարզուում է, Հրանդ Ասատուրն է: Նախ, առաջին նամակից հատուած ենք կարդում Հայր Սիմոն Երեմեանի «Գրագէտ հայեր»ում՝ հաւաստումով, թէ Հրանդ

¹ Կարելոր է մի ոչ երկրորդական հանգամանք. մինչեւ իր բառարանի հրատարակութիւնը Նուպարեանը լոյս է ընծայել «Նորայրեան բառարանի սխալները» աշխատութիւնը (1886):

Ասատուր «Արեւելք»ի գրած մէկ քանի յօդուածներու առիթով Օտեանի այս տողերը կ'ընդունի» [Երեմեան, 1914, 15]: Երկրորդի առիթով, նախ, յուշարար են Եղիա Տէմիրճիպաշեանին վերաբերող հետեւեալ կտորը, թէ «քու Պոլիս երթալէդ ի վեր² Տէմիրճիպաշեանը նորէն սկսաւ դրկել ինձ իւր տետրակները (իմա «Գրական եւ իմաստասիրական շարժում»ը – Բ.Ա.), զորս չեմ կարդար: Սիրտերը թունդ կը հանէ, հոգիները կը վառէ, եւ ապա խորշա կ'ընէ փչէ. մինչեւ ե'րբ պիտի շարունակէ այսպէս» [Թէոդիկ, 1911, 28]: Իսկ արդէն «Դիմաստուներ»ում Ասատուրը պարզապէս մէջբերում է նամակից մի հատում: Փաստօրէն, Երեմեանի եւ Ասատուրի գրքերից տասնամեակներ անց էլ Օտեանին նուիրուած գրքում շարունակում է հասցէատէրը անանուն մնալ:

«Գրիգոր Օտեանի գոհարները» հատորից դուրս է մնացել 1914-ի համարում գետեղուած Ներսէս Պատրիարքի մահուան առթիւ Մկրտիչ Էսայեանին ուղղուած 1884-ի 14 Նոյեմբեր թուակիր նամակը: Նոյն թուի մէջ լոյս է տեսել նաեւ Ներսէս Պատրիարքի նամակը՝ դարձեալ ուղղուած իր գործակից Մկրտիչ Էսայեանին (1878, Օգոստոս 19): Գրիգոր Օտեանից եւ մէկ փոքրիկ նամակ էլ Խաչիկ Օտեանից տեղ են գտել աւելի ուշ, արդէն 20-ական թթ. համարներում: Դրանց մի մասը դարձեալ դուրս է մնացել վերոնշեալ հատորից:

Առհասարակ, պիտի նկատել, որ Գրիգոր Օտեանը եւ Հրանդ Ասատուրը ըստ էութեան Եղիայի հոգեաշխարհը կազմած անհատականութիւններ են, որոնցից առաջինի համար նկատում է, թէ «իմ հոգեւոր եղբայրս ես», իսկ «Օտեանին որդեակն եմ ես հոգեւոր» [Թէոդիկ, 1914, 39]: Նկատելի է Թէոդիկի ջանքը՝ ամբողջացնելու այս հեղինակներով կազմուած գրամշակութային մթնոլորտը:

Հրանդ Ասատուրին գրական եւ մշակութային բաւական լայն շառաւիղ ընդգրկող, ըստ էութեան նաեւ մամուլի տեսութիւնն ամփոփող մէկ նամակ էլ ուղղել է Յովհաննէս Շահնազարը (Պաթում, 1 Նոյեմբեր, 1880), որ լոյս է տեսել «Գրական էջ մը» խորագրի տակ, 1914-ին:

Նամակագրական բաւական հարուստ նիւթ կայ կապուած Թէոդիկի կնոջ՝ Արշակունի Թէոդիկի «Ամիս մը ի Կիլիկիա» ուղեգրութեան մասին: Այդ նամակները ուղղուած են ինչպէս խմբագրին, այնպէս էլ հեղինակին: Յատկապէս ուշագրաւ են դրանցից երկուսը. առաջինը վերաբերում է Ռուբէն Սեւակին, որի նամակը գնահատութիւնից զատ նաեւ գրապատմական երկխօսութեան հրաշալի մէկ դրուագ է. «Սարսաղով կարդացի «Ամիս մը ի Կիլիկիա»ն: ՅԱԻն գիրքն է այդ, աւելի ճիշդ՝ ԶԱՅՐՈՅԹի՝ն գիրքը: Ու ես միսիթարուեցայ հոն գտնելով այն էական միտքը զոր ջանացեր էի դնել «Կարմիր գիրք»իս մէջ» [Թէոդիկ, 1911, 218]: Նշենք նաեւ, որ այս եւ Ռ. Սեւակի բնագրային շատ ու շատ նիւթեր, ընդգրկուած երեւանեան «Երկեր» ժողովածուում, վերցուած են հենց տարեցոյցներից: Երկրորդը Աննա Բաֆֆու 1911-ի Մայիս 27 թուակիր նամակում հիացումն է նոյն գրքի մասին, երբ նկատում է, որ այդ գործի «ընթերցանութեամբ ամէն քարասիրտն անգամ պիտի յուզւի նախանձախնդրութեան ոգով...» [Թէոդիկ, 1912, 21]: Նամակով տեղեկացնում է «Սալբի»ի գրութեան մանրամասները: Անմիջապէս յարջորդում է անտիպ վէպից մի հատում, որ բանասիրութիւնը կարծես չի արձանագրում:

Գրապատմական կարեւոր վաւերագիր է Էռնեստ Ռընանի նամակը Եղիշէ Արք. Դուրեանին, որի կարեւորութեան մասին նշում է խմբագիրը «Ռընան եւ Դուրեան» գրութեամբ. «Ահաւասիկ 22 տարուան հնութիւն ունեցող նամակ մը, որ իրաւամբ թանկագին է զայն ստորագրող անունին մեծութեամբը» [նոյն տեղում, 143]: Իսկ Ռընանին մեր գրականութեան մէջ դիմումները շատ են, այդ թում եւ Դ. Վարուժանի օրինակը (նկատի ունենք «Աստուծոյ լացը» բանաստեղծութեան բնաբանը): Կարեւոր է նաեւ այն, որ հայերէն թարգմանութեան կողքին տրւում է նաեւ նամակի լուսապատճէնը:

Պատմական մի պատառիկ է Ուիլեամ Գլադստոնի նամակը Աբրահամ Տէր-Յակոբեանին, որ վերջինս ուղեկցող բացատրական նամակով յանձնել է Թէոդիկին: Ի հա՛րկէ, Հայկական հարցի վրայ այն առանձնակի լոյս չի սփռում, ինչպէս նշում է Տէր Յակոբեանը, բայց կարեւոր է արխի-

² Այստեղ միակ անհամաձայնութիւնը առաջանում է Հրանդ Ասատուրի Պոլիս հաստատուելու ժամանակի հետ կապուած. խոստովանում է, որ «1884-ի վերջերը Պոլիս դարձած էի արդէն» [Ասատուր, 1921, 97], երբ առաջին նամակն ուղղուած է 1884-ի Ապրիլ 12-ին: Ստացում է, որ Հր. Ասատուրը Պոլիս է հաստատուել նոյն թուականին, սակայն աւելի վաղ:

ւային տեսանկյունից: Այս կարճաժամ նամակում արդէն հիւանդ պետական գործիչը հայկական հարցը դիտարկում է «ամէնէն ահաւոր խնդիրը, որուն երբեք ինձ վիճակուած է հանդիպիլ» [Թեոդիկ, 1913, 29]:

Իբրեւ վերջաբան՝ նկատենք, որ տարեցոյցի մէջ վերոնշեալ անունների մէջ առանձնակի ներկայութիւն է մանկավարժ, դաստիարակ Ռեթէոս Պերպերեանը, նաեւ նամակագրական ժառանգութեան դրուագներով, որից բերենք մէկ օրինակ: Ուսուցչի ու սանի յարաբերութեան «նորը զգացումի» մէկ գեղարուեստական շնչով արտայայտութիւնն է Պերպերեանի պատասխանը (6 Նոյեմբեր, 1903, անտիպ, 1908) կնոջ՝ Զարուհի Պերպերեանի մահուան առթիւ ձօնուած Ստեփան Բաբելեանի “Vers le passé” վալսին եւ ուղեկից նամակին:

Պերպերեանի յիշատակը եւ Թեոդիկի՝ նրա հանդէպ վերաբերմունքի սահմաններն է ճշդում տարիներ անց Թեոդիկի քրոջ որդին՝ Շահան Շահնուրը, երբ հնարաւորութիւն է ունենում քեռու հետ այցելել Սկիւտարի գերեզմանատուն եւ արձանագրել, որ «Թեոդիկ շուտով հեռացաւ իր ծնողքին հողակոյտէն, երթալ մխրճուելու համար ընդարձակ գերեզմանատան ծայրամասը» [Շահնուր, 1971, 74-75], որտեղ ամփոփուած է Ռեթէոս Էֆէնտի Պերպերեանը, դաստիարակը, որ այսօր էլ պահում է իր հետաքրքրութիւնը մանկավարժի ու մտաւորականի իր կերպարի շուրջ:

Եթէ ամփոփենք, պիտի նկատենք, որ Թեոդիկն իր «Ամէնուն տարեցոյց»ով հրաշալի երկխօսութիւն է վարում 19-րդ դարի երկրորդ կեսի գրամշակութային աշխարհի հետ, եւ մէկ յետահայեաց ակնարկն իսկ բացում է այն անուրանալի դերը, որ կատարել եւ կատարում է հայ մշակոյթի անդաստանում «Ամէնուն տարեցոյցը» կոչուող այս հրաշալի վկայարանը:

SUMMARY

The article refers to one of the most visible names of the Western Armenian press of the beginning of the 20th century, to Theodig's “Amenun Taretsuytsy” (1907-1929), particularly the correspondental heritage found in its pages.

It is emphasized the fact, that the author considered the letter as one of the important columns of his journal. This is evidenced by hundreds of published letters, for many of which the periodical continues to be a source. The letters of Eghia Temirchipashyan, Hrantsatur, Krikor Odian, Ruben Sevak and others are separated by combining and clarifying them with their later editions and creative works of the writers.

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ

1. Ասատուր Հր., Դիմաստուներ, Կ. Պոլիս, տպ. Կ. Քէշիշեան որդի, 1921, 280 էջ:
2. Երեմեան Հ. Ս., Ազգային դէմքեր, Գրագէտ հայեր, Հինգերորդ շարք, Վենետիկ, Ս. Ղազար, 1914, 478 էջ:
3. Թեոդիկ, Ամէնուն տարեցոյցը զբօսալի ու պիտանի, Գ. տարի, Կ. Պոլիս, տպ. Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, 1909, 384 էջ:
4. Թեոդիկ, Ամէնուն տարեցոյցը / ազատ հայուն պզտիկ հանրագիտարանը, հինգերորդ տարի, Կ. Պոլիս, տպ. Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, 1911, 416 էջ:
5. Թեոդիկ, Ամէնուն տարեցոյցը / ազատ հայուն պզտիկ հանրագիտարանը, վեցերորդ տարի, Կ. Պոլիս, տպ. Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, 1912, 13 չ. էջ, 419 էջ:
6. Թեոդիկ, Ամէնուն տարեցոյցը / ազատ հայուն պզտիկ հանրագիտարանը, 7-րդ տարի, Կ. Պոլիս, տպ. Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, 1913, 5 չ. էջ, 395 էջ:
7. Թեոդիկ, Ամէնուն տարեցոյցը / ազատ հայուն պզտիկ հանրագիտարանը, 8-րդ տարի, Կ. Պոլիս, հրատ. եւ տպ. Ս. Յովակիմեան, 1914, 448 էջ:
8. Հատտէճեան Ռ., Յուշատետր – 60 / Պտոյտ հայ գրականութեան քուլիսներուն մէջ, հ. Բ. Բ. տպ., Իսթանպուլ, «Մարմարա-Մուրատ Օֆսէթ», 2008, 303 էջ:
9. Շահնուր Շ., Բաց տոմարը, Փարիզ, «Յառաջ», 1971, 170 էջ: